

ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ «ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՏԵԱՆ ՀԱՒԱՔԱԾՈՆ» (Ընդհանուր տեսություն և գնահատություն)

Մխիթարեան միաբանութեան Վենետիկի ձեռագրական ընտիր եւ արժէքաւոր ժողովածուի մաս կազմող «Յարութիւն Քիւրտեան հաւաքածո»-ն մեր միջնադարեան ձեռագրական ժառանգութեան փոքրաքանակ մի հատուած է, որ պարունակում է ընդամէնը 300 հայերէն ձեռագիր, սակայն իր ձեւաւորող-տիրոջ իրաւացի բնորոշմամբ՝ հայերէն ձեռագրերի «ամնակաւ ամեմամեծ հաւաքածուն» է, որ գոյացել է Յարութիւն Քիւրտեան անունով մի անհատի «դրամական միջոցներով» եւ նրա գիտակից կեանքի մօտ 60 տարուայ ընթացքում՝ 18ամեայ հասակից՝ 1918ից ի վեր եւ մինչեւ վախճան՝ 1976¹:

Հնահաւաք-բանասէրն իր արտակարգ գործուն կամ եռանդուն կեանքի ամբողջ ընթացքում անկեղծ բարեկամութեամբ կապուած էր Մխիթարեան միաբանութեանը եւ նրա առանձին անդամներին՝ «Հացունի, Ղազիկեան, Փէշիկեան, Տայեան, Տէր-Մովսիսեան, Նահապետեան, եւլմ... եւլմ...»², ուստի եւ, քաղում ենք՝ «1975 թուականի Յունիս 25-27 օրերուն... Քիւրտեան, պատասխանելով Միաբանութեան Ընդհ. Արքաեօր ուղերձին, յայտարարեց յուզումով Ս. Ղազարու պատկառելի Մատնադարանին ու թանգարանին կտակել իր 300 հայ ձեռագիրները, տասնեակ մը հմատիպ մատնաններն ու քանի չափ հմայիլները, ինչպէս նաեւ հայ արուեստի հնագիտական իր սփռելի ու փոխ հաւաքածոն. արծաթեայ հիմաւորաց սաղաւարտներ, Աւետարանի կողբեր, ֆանանչներ, սրբատուփեր, կաղամարներ, հողա-

1 Մնուել է 9 Օգոստոսի 1901ին, Սիլիստրայում (Բուլղարիա), մահացել է 30 նոյեմբերի 1976ին, ԱՄՆ, Կանգաս մահանգի Ռիչիտա քաղաքում:

2 Տէր-ՆԵՐՍԷՍԵԱՆ, Հ. Ն., *Բանասէր եւ հնագէտ Յարութիւն Քիւրտեանի յիշատակին*, «Բազմավէպ», 1979, 1-4, էջ 408:

թափներ, Կիլիկեան հարիւրաւոր դրամներ, պղինձէ մեծ ու փոքր ամաններ, 250ի չափ կուտինահայ յախնապակիներ, ասեղնագործ բանուածքներ...»³: **Եւ առ այդ** «Բագմավէպ»ը **գիտական աշխարհին հաղորդել է, թէ** «Ս. Ղազար հասած են Յ. Քիւրտեանի բոլոր հայերէն ձեռագիրները, Կուտինայի յախնապակիները եւ այլ կարեւոր հրատարակութիւններ ու դիւանային թուղթեր»⁴:

Աւելի ուշ նոյն «Բագմավէպ»ը **գրել է**. «Յարութիւն Քիւրտեանի ձեռագրական ամբողջ հաւաքածոն, մեծ մասով՝ հանգուցեալ բանասէրի կենդանութեան, մաս մըն ալ մահէն ետք, Միացեալ Նահանգներէն (Ուիչիտա, Քանզաս), ուր կը բնակէր, 1976-1979 տարիներուն փոխադրուեցան Վենետիկ, Միքիթարեան Մատենադարանը, ուր յատուկ դարաններու մէջ ամփոփուեցան՝ Յ. Քիւրտեանի ՀԱՒԱՔԱՄԱՆՈՒՄ անուանով»⁵: **Շարունակենք քաղել նոյն աղբիւրից**. «Յ. Քիւրտեանի Հաւաքածոն կը բովանդակէ 299 ձեռագիր, որոնք երեք խումբով հասան Ս. Ղազար: Առաջին երկու խումբերը, մէկը՝ 139 եւ միւսը՝ 109 [=248] ձեռագիր, Տիար Յարութիւն Քիւրտեան անձամբ, 1976ին, փաթած, յատուկ սնտուկներով դրկեց Վենետիկ, ուր հասան նոյն տարւոյն Մարտ եւ Դեկտեմբեր ամիսներուն: Մնացած ձեռագիրները, հնատիպներն ու այլ հնութիւնները, հանգուցեալին որդիները, յարգելով իրենց հօր (մի. 30 Նոյեմբ. 1976) կտակը, փութացին ուղարկել Վենետիկ, ուր հասան 1979ի Մայիս ամսուն»⁶:

Ձեռագրերի շարքում մի թղթապանակի մէջ կային զանազան հատակոտորներ, որոնցից 2001 թուականի Սեպտեմբերին ձեռաւորեցինք մի ձեռագիր-հաւաքածոյ, որին նշանակեցինք 300րդ համար. եւ այդպէս «Քիւրտեանի հաւաքածու»ն նախկին 299ի փոխարէն այժմ ունի 300 հայերէն ձեռագիր, 21 հմայիլ եւ 21 կոնդակ, ընդհանուր հաշուով՝ 342 միաւոր: Կայ նաեւ փաստաթղթերի եւ աւելի նոր ժամանակների ձեռագրերի 77 միաւոր դիւանական մաս: Այսինքն՝ վերը թուարկուած թանգարանային իրերը եւ ձեռագրական այս ամբողջ հարստութիւնը 1918-1976 այսինքն մօտ 60 տարուայ ընթացքում հաւաքել է անհատ մի մարդ, մինչդեռ կան հայկական ազգային-մշակութային հաստատութիւններ, որոնք այսչափ ձեռագիր չունեն:

3 Անդ, 403:

4 Անդ, 432:

5 Քիւրտեանի, Յ., *Յուցակ ձեռագրաց «Յ. Քիւրտեանի հաւաքածոյ»ի*, «Բագմավէպ», 1988/Ա.-Դ., 306:

6 Անդ:

Ուրեմն՝ որտեղից եւ ի՛նչ միջոցներով է այս ամէնը հաւաքել ծագումով Երզնկացի, Բուլղարիայում ծնուած եւ Միացեալ Նահանգներում ապրած Յարութիւն Քիւրտեանը. բարեբախտաբար նա արձանագրել է ձեռագրերի մեծ մասի ստացմանը վերաբերող տեղեկութիւններ, որոնց հիման վրայ դեռեւս 2015ին գրել ենք. «հիմնականում եղեռնից փրկուած ձեռագրերից են կազմուել նշանաւոր երկու Յարութիւնների՝ Քիւրտեանի եւ Հագարեանի հաւաքածուները»⁷: Մի ուսումնասիրութեամբ հաշուարկել ենք, որ Եղեռնի հետեւանքով 1895-1923 թուականների ընթացքում Արեւմտեան եւ Կիլիկեան Հայաստանի տարածքում ձեռագրական մեր կորուստները եղել են մօտաւորապէս՝ «վաճակաւ 10.000 ձեռագիր, եկեղեցական՝ 30.000 եւ անհատական-ֆահանայական 22.500, ընդամենը՝ 62.500 մատեան»⁸, այսինքն՝ ներկայումս ամբողջ աշխարհում պահպանուած ընդհանուր 31.000 քանակի կրկնակիից աւելի:

Առ այս վկայակոչենք ժամանակակիցներին. Արտաւազդ արքեպս. Սիւրմէեանը 1951 թուականին գրել է. «1915ի ազգային աղէտը ամայացնելէ յետոյ մեր հազարաւոր եկեղեցիներն ու վանքերը, կողոպուտի ենթարկուելու էին անոնց քանգարաններն ու գանձատունները, հարուստ՝ այլազան զարդ ու սպասներով ու քանկարժէք ձեռագիրներով, որոնց շատ քիչ թիւով մնացորդները միայն 1918ին ու 1922ին սկսան դուրս գալ Կ. Պոլսոյ, Եգիպտոսի, Եւրոպայի ու մասնաւորապէս Մ. Նահանգներու հրապարակներուն վրայ, իբր հնագիտական առարկաներ, ծախուելու համար պետական-ազգային մատենադարաններու եւ անհատ հաւաքողներու: Մեր նախնեաց մտքի եւ ձեռքի վաստակները, ցեղին վերապրողներուն պէս, վայրաժատիւ կը թափանչուէին գրեթէ ամէն տեղ»⁹: Եւս մի վկայութիւն-հաստատում, որի հեղինակը Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեանն է. «Ո՞ւր են Անկիւրիոյ եւ Արմաշի ձեռագիրները... չունիմք Կեսարիոյ եւ այլ վանքերի կամ մասնաւոր հաւաքածուների ձեռագիրների թիւը, ինչպէս օրի-

7 Տե՛ս ԳՕԼԱՆՃԵԱՆ, Ա. – ՀԻԻՍԵԱՆ, Յ. Վ. – ԿԻԻԼԷՍԷՐԵԱՆ, Բ. – ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Գ., *Եղեռնը եւ մեր ձեռագրերի կորստներն ու փրկութիւնները*, Հրատ. պատրաստեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչութիւն, Էջմիածին 2015, էջ 23 (ամբողջը՝ 384 էջ + 2 ներդիր):

8 Անդ, 12:

9 *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Եւրոպայի մասնաւոր հաւաքումներու*, Առաջին հատոր, կազմեց՝ Արտաւազդ արքեպս. Սիւրմէեան՝ կաթողիկոսական լիազօր պատուիրակ Եւրոպայի հայոց թեմին, Փարիզ 1950, էջ Ա.:

նակ Տրդատ եպիսկոպոսի հաւաքածուն էր, որից միայն մի կարեւոր ձեռագիր տեսանք Նիւ Եորքում՝ Մորգանի մատենադարանում¹⁰։ Ո՞ւր են Ագուլիսի Ս. Թովմա առաքելի վանքի ձեռագիրները, որոնք կողոպտուեցան հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, որոնցից մի քանի հատորներ միայն տեսանք Ամերիկայում։ Երանի՜ թէ նրանք բոլորն էլ Ամերիկա հասած լինէին, եւ պետական հաստատութիւններին անցած, գոնէ չէին կորչիլ գիտութեան համար»¹¹։

Այսինքն՝ Քիւրտեան Հաւաքածուի առումով պէտք է կրկին ուրախութեամբ շեշտենք, որ այս անձնուէր անհատը շատ կազմակերպութիւններից շատ աւելի մեծ աշխատանք է արել եւ ստույգ կորստից փրկել է մշակութային տարատեսակ հարիւրաւոր արժէքներ, որոնցից միայն մի տեսակի՝ ձեռագրերի մասին է մեր ներկայ խօսքը։ Քիւրտեան Հաւաքածուի ձեռագրերի ստացմանը վերաբերող տեղեկութիւնների¹² համադրումով արժէ եւ մի օր շարադրելու ենք Հաւաքածուի գոյացման մանրամասն պատմութիւնը, իսկ այստեղ միայն մի քանի օրինակով փորձում ենք ընդհանուր ճաշակ-պատկերացում տալ։ Այսպէս. Քիւրտեանը գրօսաշրջային գրասենեակ ունէր, ուստի եւ շատ էր շրջում, լի-

10 Խօսքը 1274ի Օշին մարաջախտի համար Ստում գրուած եւ շֆեղ նկարագարուած Աւետարանի մասին է, որ Տրդատ եպս. Պալեանը Կեսարիայում տեսել է 1888ին, ապա 1890 Փետրուարի 14ին Յարութիւն Կիւրիւնկեանից գնել է, իսկ 1920 Յուլիսի 20ին Մադնիսայում 171 թուրքական ոսկեդրամի վաճառել Հայկազն Հապէշեանին։ Վերջինս 1926 ձեռագիրը տարել է նախ Փարիզ (այստեղ այն տեսել եւ հպանցիկ ակնարկ է գրել Ֆ. Մակլէրը), ապա 1928 Դեկտեմբերին Նիւ Եորքում Մորգանի գրադարանը Mrs. John D. Rockefeller Jr.-ից (Abby Aldrich Rockefeller) 14,500 ԱՄՆ դոլարով այն գնել եւ գրանցել է «M. 740» համարի ներքոյ (գնման՝ այն ժամանակի համար հսկայ գինն իմացանք մեր բարեկամ Sylvie Merian-ի 2018 Սեպտեմբերի 13ի նամակից)։ Մանրամասները տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին, Նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, Կազմեց՝ Գէորգ Տեր-Վարդանեան. Յաւելուած. Կենսամատենագիտութիւն Տրդատ եպս. Պալեանի, Կազմեց՝ Կարինէ Աւետեան, «Քննասէր» հրտ., Երեւան 2002, էջ 7ա եւ 195բ։

11 ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ [ՅՈՎՍԷՓԵԱՆ], *Յիշատակարան՝ ձեռագրաց, ջորս հատորով, հատոր Ա. (Ե. դարից մինչեւ 1250)*, 48 նմանահանութիւններով, Ռ.Ն. = 1951, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, Անթիլիաս, էջ ԺԶ.։

12 Առկայ են իր ձեռագրերի իր իսկ կազմած ցուցակում, որի մասին տե՛ս ստորեւ։

նում էր տարբեր, յատկապես՝ Մերձաւոր Արեւելքի երկրներում, այցելում հնավաճառական շուկաներ, մշտական կապեր ունէր հայ եւ օտար հնավաճառների հետ, որոնցից իր գնած ձեռագրերը յաճախ ստացել է նամակատան միջոցով: Ահա այբբենական ոչ լրիւ թուարկումն այն վայրերի, որոնցից ձեռք է բերել իր ձեռագրերը. Բաղդադ, Դամասկոս, Երուսաղէմ, Թաւրիզ, Թեհրան, Լալայցիզ, Լոնտոն, Լոս Անջելոս, Կալիֆոռնիա, Կահիրէ, Քլիվլէնդ (Օհայո, ԱՄՆ), Կոստանդնուպոլիս, Հայթա, Հարաւայալա, Նիւ Եորք, Նոր Զուլա, Զիկագո, Սպահան, Վենետիկ, Փարիզ, Ֆիլիպէ (Բուլղարիա), Ֆրեզնո եւ այլն:

Երբեմն նուէր է ստացել. օրինակ՝ Բիւզանդ թոփայեանից (Հ^մ 10. Աւետարան, ԺԵ. դար) Արամ Անտոնեանից (Հ^մ 205. Ժողովածու, ԺԵ. դար)՝ Փարիզ, իր մօրեղբայր «Արամ Գազան-մեանից» (Հ^մ 81. Ժողովածու, 1707)՝ Նիւ Եորք, կամ՝ «Ինծի դրկուած է անծանօթ համակիրէ մը» (Հ^մ 254. Դեղագիրք, ԺԹ. դար), «Առաջին գրչագիրը որ ստացած եմ երբ պատանի էի» (Հ^մ 234. Շարակնոց, «1643էն շատ առաջ»): Ունենք նաեւ սրտաշարժ մի վկայութիւն. «Ուրիշ ուրիշ հայերէն ձեռագրաց հետ Սոգրատ անունով յոյն հնավաճառի մը մօտ 1918ին տեսած էի ի Պոլիս. 1921ին սիրելի, պաշտելի եւ ողբացեալ մայրս՝ տիկին Ազնիւ Քիւրտեան իմ ցուցմունքներուս վրայ զանոնք 80 թուղթ թրքական ոսկիի գնեց եւ թղթատարով ինծի ուղարկեց ի Նիւ Եորք» (այդ ձեռագրերն են՝ Հ^մ 5՝ Աւետարան, ԺԶ. դար, Հ^մ 7՝ Աւետարան, ԺԵ. դար, Հ^մ 17՝ Յովհ. Երզնկացու Քերականութիւն, 1387, Հ^մ 27՝ Կանոնագիրք եւ Պատմութիւն Սոկրատի, ԺԶ. դար, Հ^մ 113՝ Զաչոց, ԺԵ. դար, Հ^մ 123՝ Շարակնոց, 1641, Հ^մ 139՝ Յայսմաւուրք, ԺԶ. դար, Հ^մ 201՝ Սաղմոսարան, ԺԵ. դար):

Մշտական գործնական կապեր է ունեցել վերը թուարկուած վայրերի հնավաճառների, գրավաճառների, աճուրդատների եւ ընդհանրապէս անհատների հետ. ուստի եւ իր ձեռքբերումները մեծ մասամբ եղել են այդ կապերի շնորհիւ. միայն մի օրինակ՝ «1930ին հայերէն հինգ ուրիշ գրչագիրներու հետ 80 տուարի գնուած ի Փարիզ՝ հնավաճառ Յակոբ Իննիւմեանէ, եւ ինծի խրկուած ապրիլ 30ին (այս եւ թիւ 23ս տեսած էի 1929ին Փարիզ այցելութեանս աւտեն)»՝ Հ^մ 6՝ Աւետարան, 1562, Հ^մ 23՝ Շարակնոց, ԺԳ. դար, Հ^մ 213՝ Շարակնոց, 1661, Հ^մ 281՝ Յայսմաւուրք, 1683:

Ձեռագրերի զգալի մասը եղեռնին նախորդած շրջանում յայտնի հաւաքածոների մաս են եղել. այսպէս՝ «Գնած եմ 1931ին Փարիզ, Պր. Հայկ Պէրպէրեանէ: Նախապէս մաս կազմած է Լմայ անա-

պատի հաւաքման իրր թիւ 331 եւ ցուցակագրուած Երուանդ Լալայեանէ՝ էջ 50: Այս մին եւ այն 400 ձեռագիրներէն, որոնք յանձնուած էին ամերիկահայ Ճիմ Զանգալեանի, որ Մեծ աղետին վանէն էջմիածին փոխադրէ եւ կաթողիկոսարան յանձնէ: Անյայտ պատճառներով ձեռագիրները իրենց տեղը չեն հասած, եւ ինչպէս իմ, նաեւ ուրիշ հաւաքմանց մաս կազմած են» (Հ^մ 138. Սաղմոս եւ Քաղուածու Նարեկ, 1688): Վասպուրականեան է նաեւ այս մէկը. «Լալայեան՝ վասպուրականի ցուցակի թիւ 354՝ [Կողբանց գիւղի Ս. Յովհաննէս եկեղեցիի թիւ 1] ձեռագիրն է, [որ ուխտատեղի է եւ կոչուում է Կարմիր Աւետարան]. 1937ին, կարծեմ, Թաւրիզ, բանասէր Հայկ Անեմեանին փոխ տեսայ, յետոյ՝ Փարիզ՝ հնավաճառ Գառնիկ Գեորգեանի փոխ... որմէ եւ գնած եմ 1950ին, երեք ուրիշ հայերէն եւ մէկ եթովպերէն ձեռագրաց հետ, 750 տողարի» (Հ^մ 46. Աւետարան, 1607): Միւսը «Նախկին Սեբաստիոյ Ս. Նշանի հաւաքածուէն է... 1929ին Երուսաղէմ այցելութեան առնէն հաւաքման թիւ 1 Աւետարանի հետ միասին 100 տողարի գնած եմ այժմ հանգուցեալ հայ հնավաճառէ մը» (Հ^մ 1. Աւետարան, ԺԲ. դար, եւ Հ^մ 2. Աւետարան, ԺԲ-ԺԳ. դարեր): Ուշագրաւ է, որ Սեբաստիայի այս հաւաքածուի ձեռագրերի մի զգալի քանակ այժմ Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքի մատենադարանում է, բայց Քիւրտեանի վկայութիւնը ցոյց է տալիս, որ մի այլ քանակ էլ ընկել է առեւտրականների ձեռքը եւ հասել մինչեւ Փարիզ, որտեղից եւ ձեռք է բերել կրկին Յարութիւն Քիւրտեանը. այսպէս՝ «Չորս ուրիշ ձեռագիրներու հետ գնուած է ի Փարիզ՝ հնավաճառ Կարապետէ: Ձեռագիրս Մեծ Ոնիրէն առաջ մաս կազմած է Սեբաստիոյ Սր. Նշանի վանքին, ուր Թորգոմ Գուշակեան սրբազան 1908-1913 տարիներուն տեսած եւ ցուցակագրած է (էջ 44) որպէս ձեռագիր թիւ 50: Այն առնէն հանգամանքը «լաւ պահուած» նշանակուած է, սակայն այն առնէն իսկ Մատթէոսի խորանը եւ աւետարանիչներուն մանրանկարները «պատռուած» եւ հանուած էին» (Հ^մ 153. Աւետարան, 1651):

Թէ՛ ընդհանրապէս եղեռնի շրջանի մեր մշակութային կորուստների եւ թէ՛ Քիւրտեանի ժողովածուի համար շատ յատկանշանական է հաւաքածուի 25րդ՝ ԺԱ. դարի մասնական Աւետարանի պատմութիւնը. այսպէս՝ քաղում ենք Քիւրտեանի արած նկարագրութիւնից. «Ձեռագիրս իր ամբողջական վիճակին մէջ մաս կը կազմէր բաւականաթիւ այն ձեռագիրներուն, որոնք 1896ի ջարդերէն վերջ, այրած եւ աւերուած հայ դպրոցներու վերաշինութեան համար, Սեբաստիոյ Պետրոս արքեպիսկոպոս վաճառած էր հնավաճառ Իննուհինգ եղբայրներուն (Փարիզ): Այդ ձեռագիրներէն 24 հատը

ցուցակագրուած էին համառօտակի» Փարիզ, 1909¹³... Այս գործին մէջ (Min. Arm. էջ 17) կը նկարագրուի իբր թիւ 10 երկաթագիր ձեռագիր մըն ալ, որ նոյնպէս կը պատկանի Իննուներեան եղբարց¹⁴: Այս նկարագրութեան համաձայն ձեռագիրը ունի եղեր 208 թերթ, սկիզբը երեք թերթերը համաբարբառի տախտակներ պարունակող: Դեռ այն ատեն կը պակսին եղեր Մատթէոսի, Մարկոսի եւ Յովհաննու ծաղկեալ ճակատները, որոնցմէ գոնէ Մարկոսինը որոշ կերպով կտրուած հանուած կ'երեւայ ձեռագրին իմ մասիս մէջ: Այն ատեն ալ Յովհաննէսի Աւետարանը կը հասնի եղեր մինչեւ թ. 24, ինչպէս այժմ իմ մասս ցոյց կու տայ: Այն ատեն ալ չունի եղեր ո'չ յիշատակարան եւ ո'չ ալ թուական, սակայն կը նկատուի եղեր իբր ժ. դարու ձեռագիր՝ իր գրչութեան համար: Յայտնի չէ, թէ ե՞րբ Իննուներեան ծախեր է այս ձեռագիրը, սակայն 1936ին ես անիկա գտայ արդէն Նիւ Եորք՝ Գրիգոր Մինասեան հնավաճառին ֆոլ (չեմ յիշեր թէ այն ատեն ձեռագիրը մասնատուած ըլլար), որ մասամբ ծախեր էր Ֆրիք Արք Գալերիի: Տարիներ անց Ֆրիք Արք Գալերիի ձեռագրապետ ողբացեալ բարեկամս՝ Տոկ. Լաճնամակով ինձի իմացուց ձեռագրին Մարկոսի եւ Ղուկասու մասերուն իրենց ֆոլ ըլլալը եւ ազնուութեամբ ինձի ուղարկեց ձեռագրին միակ մանրանկարին՝ Ղուկասու ճակատին լուսանկարը: Վերջապէս, Գրիգոր Մինասեանի մահուան վերջ իր շնորհալի աղջիկը՝ Ատրինէ, ուրիշ ձեռագիրներու եւ կուտինահայ յախճապակիի հետ, ինձի ծախեց այս հին ձեռագրին մնացեալ մասը՝ կազմով միասին»։ **Լրացնենք. ձեռագրի՝ Քիւրտեանին պատկանող մասն ունի 93 թերթ, իսկ Ֆրիքը պատկերասրահինը՝ 119 թերթ է**¹⁵:

Քիւրտեանի հաւաքածուի մէջ կայ ժամանակին Պարսկաստանի Փերիա գաւառի Բոյորան գիւղում եղած՝ կրկին մասնական մի Յայսմաուրք (չմ^ը 140), որ 1943 Նիւ Եորքում նա գնել է օտար (պարսիկ կամ հրեայ) մի հնավաճառից եւ որի մի այլ

13 ABDULLAH SERAPHIN, *Frédéric Macler, Études sur la miniature arménienne*, Paris 1909, 17. հմմտ. ՍԱԼՄԱՍԼԵԱՆ, Ա., *Հայկական մատենագիտութիւն. ամբողջութեամբ վերանայուած եւ զգալիօրէն աւելացուած նոր հրատարակութիւն*, խմբ.՝ Ա. Ս. Ղարիբեան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրտ., Երևան 1969, 367:

14 Ըստ Քիւրտեանի՝ «24 ձեռագրաց ցանկին մէջ իբր թիւ 2 [Miniature arménienne, էջ 15]՝ մասն է Freer Galleryի՝ 33.5, 47. 2-4»:

15 Հմմտ. DER NERSESSIAN, S., *Armenian manuscripts in the Freer Gallery of Art* (with 108 plates) (publication 4516), Washington 1963 (Smithsonian institution. Freer Gallery of Art, Oriental studies, no. 6), 1-6:

մասը *Կոնեկտիկուտում է՝ Hartford Seminary Foundation, The Case Memorial Library, Arm. 5*¹⁶:

Առաւել բարբարոսական է եղել ճակատագիրը Քիւրտեանի Հ^մ 281 Յայտմաւորքի (Եւդոկիա, ՌՃԼԲ. - 1683, գրիչ Մկըրտում Շօշեցի, ստացող՝ Յովհաննէս, Բաղդասար, Մինաս մահտեսիներ, 41,8x30 չափսի 482 թերթ, հաստութիւնը՝ 12,5 սմ): Սա բառացիօրէն բզկտուել է. նախ պատկանել է փարիզեցի հնավաճառ Ինճուճեանին, նրանից անցել է Գրիգոր Մինասեանին (Նիւ Եորք), իսկ սա մաս առ մաս ծախել է. 482 թերթ՝ Յարութիւն Քիւրտեանին, 58 թերթ՝ Յարութիւն Հազարեանին¹⁷, 28ը՝ Տիրայր արքեպս Տէր-Յովհաննիսեանին¹⁸, 1 թերթ՝ Զեստէր Բիտտի գրադարանին (թ. 243. Յունուարի 6՝ Ծնունդ եւ Յայտնութիւն)¹⁹:

Կան նաեւ Գարեգին Յովսէփեան կաթողիկոսի յիշատակած՝ Կեսարիայի ձեռագրերից. ահա՝ Հ^մ 68 Աւետարանին վերաբերողը՝ «Գնած եմ հանգուցեալ Թորոս Ազատեանէ, որ գրքին ծանրութեան պատճառաւ երկու մասի բաժնած էր եւ քոյրատարով Կ. Պոլիսէն ինձի դրկած: Աւետարանս ժամանակին պատկանած է Կեսարիոյ Թաւուսունի Ս. Թորոս եկեղեցիին»: Նաեւ Հ^մ 75 Կանոնագրքին վերա-

16 *A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States*, By Avedis K. Sanjian, University of California Publications. Near Eastern Studies, 16. University of California Press, Berkeley, Los-Angeles, London 1976, 94-8:

17 Հազարեան հաւաքածուի ձեռագրերի՝ Լոնդոնի Սոքրի ընկերութիւնում կայացած անուրդում 1985 նոյեմբերին սա գնել է Warren անունով մէկը. տե՛ս ԵԳԱՆԵԱՆ, Օ., Աշխատութիւններ. *Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները*. մասն Բ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Յարութիւն Հազարեան Կեսարացոյ (Նիւ Եորք, ԱՄՆ), *Ուղեցոյցներ Մաշտոցեան Մատենադարանի հայերէն պատառիկների եւ հմայիլների հաւաքածուների*, Հրատարակութեան պատրաստեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան, «Նաիրի» հրտ., Երեւան 2014, 156-162 եւ 290:

18 Այս մասն այժմ գտնում է Մաշտոցեան Մատենադարանում՝ ձեռ. Հ^մ 10016, որ 1961 Փետրուարի 11ին այստեղ է փոխադրուել Երեւանի Զարեցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի՝ Տիրայր արքեպիսկոպոսի արխիւից. տե՛ս *Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի*, հտ. Բ., Երեւան 1970, 1030:

19 Տե՛ս *A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States*, By Avedis K. Sanjian, University of California Publications. Near Eastern Studies, 16. University of California Press, Berkeley, Los-Angeles, London 1976, p. 418-9, No 100^a որպէս New Jersey, Princeton University Library, Armenian Manuscripts, Princeton Series, No 1 (Am. 13658):

բերող այս՝ «Գնած եմ Թորոս Ազատեանէն, որ ինծի ուղարկած է Պոլիսէն՝ քողատարով: Ձեռագիրը, նախապէս կ'երեւայ, մաս կազմեր է Կեսարիոյ ձեռագիրներուն, որոնք ցուցակագրուած են Տրդատ Եպս. Պալեանէ, իր «Ցուցակ Ձեռագրաց ի Թուրքիա», հտ. Բ., էջ 58, [թիւ 25 (13)]»²⁰:

Հետաքրքիր է, որ Քիւրտեանը կորստից փրկել է նոյն առաջին համաշխարհային պատերազմի շրջանում նաեւ Արեւելեան Հայաստանի կարեւոր կենտրոններից ցիրուցան եղած հաւաքածոների ձեռագրերը. այսպէս՝ «Ուրիշ ձեռագրաց հետ ի Նիւ Եորք գնած եմ գորգավաճառ Յակոբ Պարոյրեանէ: 1931ին շատ մը ուրիշ ձեռագիրներու հետ տեսած եմ ի Թաւրիզ, Գարսեւան անուն անհատի մը մօտ: Ձեռագիրս Ագուլեաց Ս. Թովմայի վանուց գրչագրերէն է՝ նկարագրուած Մեսրոպ Վ. Մագաւուտեանէ՝ «Արարատ», 1911, էջ 567, թիւ 23 եւ Երուանդ Լալայեանէ՝ «Գողթն», թիւ 10» (Հ^մ 32-34՝ 1477, 1597 եւ 1428 թուականների Աւետարաններ, Հ^մ 37՝ Աստուածաշունչ, 1638): Առաւել ուշագրաւ է, որ այս ձեռագրերից մէկը Ագուլիսի Թովմա առաքելի վանքի ունեցած միակ մագաղաթէ ամբողջական Աստուածաշունչն է (գրուած՝ 1638). եւ նոյնպիսի միակն է նաեւ Քիւրտեան հաւաքածուի մէջ: Կրկին ուշագրաւ է նաեւ այն, որ օրերս Երեւանում՝ Մաշտոցեան Մատենադարանում ստացել ենք Ագուլիսի նոյն վանքին պատկանած մի քանի այլ ձեռագիր²¹. այսինքն՝ եղեռնի հետեւանքով ցանուցիր եղած մշակութային արժէքների հաւաքումը շարունակուում է նաեւ մէկ դար յետոյ:

Քիւրտեան հաւաքածուի ձեռագրերի ժամանակագրական սահմանները ԺԱ.-ԺԹ. դարերն են, ձեռագրերի առաւել մեծ կամ մէկ երրորդ մասը վերաբերում է ԺԷ. դարին, որ ընդհանրապէս յատուկ է մեր ձեռագրական բոլոր հաւաքածոներին:

Քանի որ հաւաքածուի միաւորները եղել են մեծ մասամբ Արեւմտեան Հայաստանի եկեղեցապատկան ձեռագրեր, այդ պատճառով էլ ծիսական բնոյթի գրքերը բաւական շատ են. Քիւր-

20 Այս երկու ձեռագրերի նկարագրութիւնները տե՛ս *Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Ջմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին*, Նկարագրեց՝ Տրդատ եպիսկոպոս Պալեան, Կազմեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան, «Քննաւեր» հրտ., Երեւան 2002, 59 եւ 87-88:

21 Տե՛ս Տէր-ՎԱՐԳԱՆԵԱՆ, Գ., *Համագգային հայ կրթական եւ մշակութային միութիւնից Մաշտոցեան Մատենադարանի ստացած ձեռագրերը* - «Բագին», ԾԷ(2018), Յուլիս-Սեպտեմբեր, թիւ 3, 61-67:

տեան հաւաքածուի մէջ կայ 51 միաւոր Աւետարան (եւս 3՝ Մանկութեան Աւետարան), 48 Շարականոց, 23 Մաշտոց, 300 ընդհանուր քանակից ընդամէնը՝ 122ը: Բնականաբար հասկանալի է, որ սրանք մեծ կարեւորութիւն ունեն յատկապէս իբրեւ մեր ձեռագրական արուեստի հին եւ բարձրարժէք յուշարձաններ: Առանց բացառութեան՝ գրեթէ բոլոր աւետարանները մանրանկարչական անուրանալի արժէքներ ունեն. Քիւրտեանը յատուկ սէր ունէր Վասպուրականի հայկական մանրանկարչութեան նկատմամբ, ուստի վասպուրականեան ճոխ նկարազարդումով աւետարաններ չատ է գնել: Պակաս կարեւոր չեն նաեւ այս ձեռագրերի ունեցած՝ արժէքաւոր տեղեկութիւններով հարուստ՝ գրչութեան ժամանակի եւ յետագայ բազմաթիւ յիշատակարանները:

Մնացեալ 178 ձեռագրերն ունեն ամենատարատեսակ եւ որպէս կանոն՝ մեծարժէք բովանդակութիւն. այս տեսանկիւնից բաւական հետաքրքիր է, որ ինչպէս Մխիթարեանց Վենետիկի ձեռագրական հաւաքածուն է ամբողջովին ընտիր՝ հաւաքուած է ամէն ինչի լաւագոյնն ընտրելու սկզբունքով, նոյնպէս՝ նոյն սկզբունքով է ձեւաւորուել նաեւ Քիւրտեան հաւաքածուն. երկու դէպքում էլ, Ներսէս արքեպս. Տէր-Ներսէսեանի խօսքով՝ «հաւաքողներն իմացել են իրենց հաւաքած նիւթերի արժէքը»: Աւելի պատկերաւոր ասենք. եթէ Երեւանի Մաշտոցեան Մատենադարանում հաւաքուել է մեծ մասամբ ներկայ Հայաստանում եղած ամբողջ եւ որոշ չափով սփիւռքից ստացուած ձեռագրական նիւթը, ուստի եւ այստեղ ձեռագրերի որակը եղած քանակի մէջ է, ապա Մխիթարեանց Վենետիկի եւ Քիւրտեան հաւաքածոներն ամբողջութեամբ որակեալ են: Քիւրտեանի պարագայում երկու կարեւոր հանգամանք կայ. ա. հաւաքողը հասկանում էր ձեռագրերի արժէքը, բ. առաւել արժէքաւոր նիւթերը պէտք էր ձեռք բերել մի անհատի ունեցած ո՛չ մեծ կամ ո՛չ անսահման նիւթական միջոցներով: Գրառումներ ունի նաեւ այն մասին, որ հրաժարուել է գնել իրեն առաջարկուած՝ նոր ժամանակների ձեռագրեր, նման ամէն դէպքում բացատրելով, որ իրեն հետաքրքրում են միայն միջնադարեան ձեռագրերը:

Երեւան այցելութիւնների ժամանակ Քիւրտեանը պատմում էր նաեւ սակարկելու իր սիրած եղանակների մասին, բայց նրա պատմածներից առաւել կարեւորը հետեւեալն է. դէպքի թուականն ինձ յայտնի չէ, բայց եղել է անպայման երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ. Քիւրտեանին ընդունել է Հա-

յաստանի Մշակույթի նախարարը եւ գրոյցի ընթացքում նրան հարցրել, թէ «հայերէն ձեռագրերն արեւմտեան աճուրդներում ի՞նչ գին ունեն»։ Հասկանալով, թէ ի՛նչ կարող են անել Մատենադարանի ձեռագրերի հետ, Քիւրտեանն անմիջապէս պատասխանել է. «Բան մը չարժեն»։

Դառնանք միւս ձեռագրերի բովանդակութեանը, որ արդէն ասացինք՝ ամենատարատեսակ բնոյթի են. հաւաքածուի մէջ կայ 38 միաւոր տարաբնոյթ ժողովածու, աստուածաշնչական հինգ ձեռագիր, ութ Յայսմաուրք (հիմնականում ամբողջական), երեք Ճաշոց, տասներկու Սաղմոսարան (մէկը՝ Յակոբ Թօխաթեցու տաղաչափեալ տարբերակը), չորս Խորհրդատետր, եօթ ժամագիրք (մէկը՝ հայ հոռոմներին), երկու Գանձարան, եօթ Տաղարան, Գրիգոր Տաթեւացու տարբեր երկեր պարունակող վեց ձեռագիր, մի Նարեկ եւ մի Լուծմունք Նարեկայ, հինգ Կանոնագիրք, վեց բժշկարան, վեց Տօնացոյց, երեք Քարոզգիրք, մի քանի տոմարական, Աղօթագրքեր, Բառգրքեր, Հմայական-գուշակողական տասներկու ժողովածու. Պատմագիրներին՝ երկու Խորենացի, մէկական՝ Պատմութիւն Սոկրատայ, Դրասխանակերտցի, Կաղանկատուացի, Ուռհայեցի, Գէորգ Սֆրանձէս (Թուրքաց՝ Առումն Պոլսոյ), Եւկլիդէսի Երկրաչափութեան հայերէն տարբերակի միակ ամբողջական յայտնի օրինակը, Աղեքսանդրի Պատմութեան ճոխ նկարագրողուած մի օրինակ։ Ապա այբբենական կարգով թուարկենք այս հաւաքածուի մէջ ներկայ որոշ հեղինակների անուններ. Անանիա Շիրակացի, Անդրէաս Կապադովկացի, Առաքել Բաղիչեցի, Առաքէլ Սիւնեցի, Բաղդասար Շուշեցի, Գրիգոր Փէշտմալճեան, Դանիէլ կաթողիկոս, Իգնատիոս Սելեւոնցի, Մըխիթար Գօշ, Յակոբ Ղրիմեցի, Յովհաննէս Դամասկացի, Յովհաննէս Որոտնեցի, Յովհաննէս Զուղայեցի Մրբուզ, Վանական վարդապետ, Վարդան Այգեկցի, Վարդան Արեւելցի եւ այլն։

Թէ՛ գրքարուեստի եւ թէ՛ բովանդակութեան տեսակէտներից շատ արժէքաւոր այս հաւաքածուն, անձնական լինելով հանդերձ, երբեւէ գրուանի տակ չի եղել. ձեռագրերը Սուրբ Ղազար ուղարկելուց առաջ՝ դեռեւս 1970 թուականին Քիւրտեանը գրել է. «Այժմ գրչագիրները կը պահուին բնակարանիս մէկ մասնաւոր մատենադարան սենեակի մէջ։ Կարելի եղած ամէն խնամք կը տարուի անոց պահով պահպանութեան համար։ Որեւէ արգելք չկայ լուրջ եւ պատասխանատու անձերու կամ հաստատութիւններու կողմէ անոց օգտագործման համար։ Միշտ ընդառաջ գացած եմ հաստատութիւններէ եւ

գիտնական աշխատասիրողներէ եղած դիմումներուն՝ լուսանկարելու կամ արտագրելու»²²:

Իրաւացի այս պնդման լաւագոյն օրինակը Եւկլիդէսի Երկրաչափութիւնն է, որի պահպանուած միակ ամբողջական օրինակը Քիւրտեան հաւաքածուի մէջ է եւ որի հիման վրայ էլ Աշոտ Աբրահամեանը 1962 Յրեւանում արել է թարգմանական այս կարեւոր բնագրի հրատարակութիւնը²³: Սակայն, ուրիշներին տրամադրելուց առաջ եւ աւելի, Քիւրտեանն ինքն է հրապարակել իր հաւաքածուի կարեւոր ձեռագրերի սեփական բազմաթիւ հետազոտութիւնները: Ասածս աւելի առարկայօրէն պատկերելու համար մանրամասնենք. Քիւրտեանի տպագիր գործերի մեր կազմած նախնական մատենագիտութեան համաձայն՝ ո՛չ ճշգրիտ կամ մօտաւոր հաշիւներով՝ 1919 թուականից սկսած՝ 26 տարբեր պարբերականներում նա հրատարակել է մեզ յայտնի 498 յօդուած (այս քանակը ճշգրտուելու եւ մեծանալու է նուազագոյնը 100ից աւելի միաւորով), տեսել ենք սրանցից արտածուած՝ ինքնուրոյն-առանձին էջակալում ունեցող 27 առանձնատիպ գրքոյկ, ի վերջոյ՝ ունենք նրա հեղինակած 4 գիրք: Միայն «Բազմավէպ»ում 1921-1975ի ընթացքում տպագրել է 114 յօդուած եւ 152 գրախօսական. ընդհանուր հաշուով՝ 950 էջ²⁴: Եւ տպագիր այս հսկայ նիւթի մեծ մասը վերաբերում է Քիւրտեանի ձեռագրական հաւաքածուի միաւորներին, ըստ այսմ՝ նախ պէտք է կազմուի տպագիր այս մեծ նիւթի հնարաւոր չափով ամբողջական, ծանօթագրուած մատենագիտութիւնը, ապա՝ նոյն այս նիւթի ընտրանիի հատոր(ներ)ի հրատարակութեամբ հնարաւոր է եւ պէտք է ապահովել ձեռագրական շատ արժէքաւոր «Քիւրտեան» հաւաքածուի գիտական առաւել արդիւնաւէտ շրջանառութիւնն ու գործածութիւնը:

22 ՔԻՒՐՏԵԱՆ, Յ., Համառօտ ցուցակ հայերէն գրչագիրներու Քիւրտեան հաւաքածոյի ի Ռիչիդա. Գանգաս. ԱՄՆ - Բանքեր Մատենադարանի, հտ. 10, Երեւան 1971, 409:

23 *Երկրաչափութիւն Եւկլիտիւն*, աշխատ. Աշոտ Աբրահամեանի, ՀՍՍՌ ԳԱ Բնագիտութեան եւ տեխնիկայի պատմութեան խորհուրդ, ՀՍՍՌ ԳԱ հրտ., Երեւան 1962, 285 էջ:

24 ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ, Հ. Ն., *Բանասէր եւ հնագէտ տիար Յարութիւն Քիւրտեան անդամ Ս. Ղազարի հայկական կանառին*, «Բազմավէպ», 1975, 3-4, 422:

Միաժամանակ, չմոռանա՞նք, որ «Յարութիւն Քիրտեան» հաւաքածուն գիտութեանը յայտնի է ո՛չ միայն Քիրտեանի կամ այլոց յօդուածներով: Նախ ինքն իսկ տպագրել է իր հինգ ձեռագրի նկարագրութիւն²⁵, ապա՝ հաւաքածոյի առաջին՝ Հ^մ 1-46 ձեռագրերի նկարագրութիւնները նախապէս՝ 1971ին եւ 1973ին տպագրուել են «Բանբեր Մատենադարանի» տարեգրքում²⁶: այստեղ կայ Յ. Քիրտեանի ստորագրութեամբ առաջաբան, որ ակնյայտօրէն ունի խմբագրութեան էական շտկումներ ու խմբագրական աշխատանքի արդիւնքով արուած յաւելումներ: Իսկ յաջորդող՝ Հ^մ 47-93 ձեռագրերի նկարագրութիւնները տպագրուել են «Բազմավէպ» հանդէսի 1988, 1989 եւ 1990 թուականների համարներում²⁷: այստեղ եւս կայ առաջաբան, որ ստորագրել է այս հատուածը հրատարակութեան պատրաստող Հ. Սահակ Վրդ. Ճեմ-ճեմեանը:

Մատենադարանի Բանբերում հրատարակուած մասը խմբագրութեան խնդրանքով պատրաստուած «համառօտ ցուցակագրութիւն» է, որ «գիտական պահանջներու համար անբաւարար, եւ սակայն, կարելո՞ր է հրատարակել, որպէսզի մասնագէտներ ծանօթ ըլլան իր ընդհանուր գիծերուն մէջ անձնական այս ամենամեծ հաւաքածուին, ուր կը գտնուին բազմաթիւ եզական գրչագիրներ»²⁸, այստեղ կայ «ձեռագիրներու արտաքին նկարագրութիւնը եւ Յիշատակարանները²⁹, բայց ո՛չ բովանդակութիւնը», այդուհանդերձ, այս «առաջին

25 ՔԻՐՍԵԱՆ, Յ., *Ցուցակ հայերէն ձեռագրաց անձնական մատենադարանի Յարութիւն Քիրտեանի, ի Ռիչիքա, Կանսաս, «Հանդէս Ամսօրեայ», 1929/Դ., 208-220:*

26 Նոյն, *Համառօտ ցուցակ հայերէն գրչագիրներու Քիրտեան հաւաքածոյի ի Ռիչիքա. Գանգաս. ԱՄՆ, ի Բանբեր Մատենադարանի*, հտ. 10, Երեւան 1971, 409-422 (Հ^մ 1-20), հտ. 11, Երեւան 1973, 399-422 (Հ^մ 20-46). Այսուհետեւ՝ ԲՄ համառօտմամբ, հատորի եւ էջի համարներով:

27 *Ցուցակ ձեռագրաց «Յարութիւն Քիրտեան» հաւաքածոյի, ի Բազմավէպ, 1988/Ա-Դ., 306-354 (Հ^մ 47-74), 1989/Ա-Դ., 354-412 (Հ^մ 75-86), 1990/Գ-Դ., էջ 466-486 (Հ^մ 87-93. այսուհետեւ՝ «Բազմավէպ», տարի, Հ^մ եւ էջահամարներ):*

28 ԲՄ, հտ. 10, Երեւան 1971, 409:

29 Լրացնենք Քիրտեանի ճշգրտումով «Յիշատակարանները կը հրատարակենք իրենց գլխաւոր մասերուն մէջ» (ԲՄ, հտ. 10, Երեւան 1971, 409), այսինքն՝ տպուած են հիմնականում միայն գրչութեան գլխաւոր յիշատակարանների «կարեւորագոյն» տողերը:

46 ձեռագիրներու նկարագրութիւնը³⁰... բաւարար համարելով» *եւ* «նպատակ ունենալով, մօտիկ ապագային՝ վերակրկնել անոնց նկարագրութիւնը, երբ առանձին հատորի մը մէջ պիտի ամփոփենք ամբողջութիւնը»³¹, *Հ. Սահակ Ճեմճեմեանը ցուցակի հրատարակումը չարունակել է* «ձեռքի տակ ունենալով թէ՛ ձեռագիրները եւ թէ՛ Յ. Քիրտեանի ընդարձակ «Ցուցակ ձեռագրաց»ը, որմէ երբեմն կատարած ենք բառացի մէջբերումներ՝ չակերտներու մէջ առնելով»³²: Ապա՝ «Կրկնութենէ խուսափելու համար, չենք ծանրացած այն ձեռագիրներուն վրայ, որոնք անցեալին պատկանած ըլլալով ազգային ուրիշ մէկ հաստատութեան կամ հաւաքածոյի, արդէն իսկ նկարագրուած են: Նրման պարագաներուն՝ մատնանշած ենք անոնց տեղերը»³³:

Յ. Քիրտեանի ընդարձակ «Ցուցակ ձեռագրաց» ասելով նրկատի ունի այն, որի մասին 1988ին գրել էր. «Գրչագիրներուն հետ Յ. Քիրտեան Ս. Ղազար դրկեց նաեւ իր պատրաստած «Ցուցակ ձեռագրաց»ը, մեքենագրուած 479 մեծադիր (22x28 սմ) էջ, բովանդակելով նկարագրութիւնը 259 ձեռագիրներու»³⁴:

30 «Բազմավէպ», 1988/Ա.-Դ., 307: Նկատենք, որ հաւաքածուիս չմը 21 ձեռագրի նկարագրութիւնն ի ԲՄ, հտ. 10, էջ 422 դրուած է որպէս չմը 20, իսկ իրական չմը 20ի նկարագրութիւնը՝ նոյն 20 թուահամարով դրուած է յաջորդ հատորում եւ առ այդ կայ խմբագրութեան ծանօթութիւնը՝ «Թիւ 21 ձեռագրի նկարագրութիւնը հեղինակի կողմից բաց է թողնուած» (ԲՄ, հտ. 10, 422):

31 «Բազմավէպ», 1988/Ա.-Դ., 307:

32 Անդ, 306:

33 Անդ, 307: Այսինքն՝ ձեռագրերի նկարագրութիւնները տպագրելու փոխարէն յղել է նրանց՝ լաւ կամ վատ նկարագրութիւններ ունեցող ձեռագրացուցակները. նկատի ունի մասնաւորապէս հաւաքածուիս չմը 49, 50, 51 (Աւետարան, ԺԵ. դ., 1523 եւ ԺԶ. դար) ձեռագրերը, որոնք համապատասխանաբար որպէս չմը 10, 8, 12 նկարագրուած են՝ Մայր ցուցակ ձեռագրաց ներդրալի մասնաւոր հաւաքումներու, Առաջին հատոր, Կազմեց Արտաւազդ Արքեպս. Սիրմէնան, Փարիզ, 1950, էջ 14-15, 12-3, 19. ապա՝ չմը 70 (Աւետարան, 1479), որ որպէս չմը 14 նկարագրուած է՝ Տրդատ եպս. Պալեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, հտ. Ա., տետր Բ., Կ. Պոլիս, 1893, էջ 47: Ե՛ւ այս, ե՛ւ նախկինում յայտնի այլ հաւաքածուների պատկանած եւ հրապարակուած նկարագրութիւններ ունեցող միւս ձեռագրերը մենք ներկայացնելու ենք՝ թէ՛ այդ ցուցակների օգտագործումով, թէ՛ Քիրտեանի նկարագրութիւնները խմբագրելով եւ թէ՛ բուն ձեռագրերով ստուգելով:

34 «Բազմավէպ», 1988/Ա.-Դ., 306 (ցուցակի թերթերի հիմնական չափսը ամերիկեանն է՝ 27,94x21,59 սմ):

Ահա այս վերջինի հիմքի վրայ տարիներ առաջ՝ 2000 թվականին, մենք ստանձնեցինք Քիւրտեան հաւաքածուի ձեռագրացուցակը հրատարակութեան պատրաստելու պարտաւորութիւնը. Քիւրտեանի մեքենագրութիւնն առանց տողամէջ տարածքի է, էջում ունի միջին հաշուով 62-65 տող, տողում միջինը 75 նիշ, յաճախ էլ էջերն ունեն սոսնձուած յաւելուածներ³⁵: Մխիթարեան միաբանութեան ժամանակի ընդհանրական արբահայր Եղիա վ. Քիւրդպեանից ստացանք չստուգուած եւ չսրբագրուած համակարգչային շարուածք. Հ^մ 1-46 ձեռագրերինը՝ ըստ «Բանբեր Մատենադարանի»ի համառօտ, Հ^մ 47-93 ձեռագրերինը՝ ըստ «Բագմավէպ»ի կրճատումներով տպագրուած տարբերակների, իսկ Հ^մ 94-259 ձեռագրերինը՝ ըստ Քիւրտեանի մեքենագրութեան: Հ^մ 1-93 ձեռագրերի մասը համապատասխանեցրել ենք վերջինին, մեքենագրութիւնից շարուածքի մէջ մուծելով պակասող՝ անհրաժեշտ ամէն ինչը («Բովանդակութիւն», յիշատակարանների ամբողջութիւն, արտաքին հանգամանքներին վերաբերող լրացուցիչ եւ օգտակար ու անհրաժեշտ դիտուած բոլոր տեղեկութիւնները), միաժամանակ սրբագրելով-ճշգրտելով ամբողջ շարուածքը: Իսկ անտիպ մնացած Հ^մ 94-250 ձեռագրերի նկարագրութիւնների համակարգչային շարուածքը վերաբաշխել ենք մեր հարցակարգի մէջ, ապա համեմատելով մեքենագրի հետ՝ արել անհրաժեշտ տեղաշարժերը եւ սրբագրումները:

Ձեռագրացուցակի վերականգնութեան նպատակով Երեւանում մեր արած նախապատրաստական աշխատանքի մանրամասների ներկայացումը թողնելով տպագրութեան հատորի առաջաբանին, Քիւրտեանի կազմածի մասին աւելի յստակ պատկերացում տալու համար այստեղ կրկին վկայակոչենք Հ. Ս. Ճեմճեմեանին. «Այս ցուցակը, իր ներկայ վիճակով, կ'անցնի մեզի ծանօթ «Ցուցակ ձեռագրաց»ներու սահմանը: Հեղինակը, ազատ կերպով, առանց յատուկ օրէնքի, կատարած է ցանկագրութիւնը, զոր կարելի է նկատել ուսումնասիրութիւն մը իւրաքանչիւր գրչագրի մասին, ծանրանալով յատկապէս մանրանկարներու եւ նկարիչներու վրայ, տալով ընդարձակ լուսարանութիւններ անոնց անձին եւ դպրոցներուն մասին»³⁶: Այսինքն՝ հնահաւաքի անհատական որեւէ հաւաքածուի տիրոջը յատուկ հետաքրքրասիրութեամբ եւ շահագրգռութեամբ՝

35 Ամբողջը սովորական միջին՝ էջում 1800 նիշով մեքենագրութեան մօտ 1300 էջի չափ է:

36 «Բագմավէպ», 1988/Ա.-Դ., 306:

Քիւրտեանն աշխատել է պարզել իրեն պատկանող ձեռագրի գրչի, ծաղկողի կամ կազմողի գրած եւ նկարազարդած, նոյն ձեռագրի գրչութեան տեղում ստեղծուած՝ այլուստ իրեն յայտնի ձեռագրերի մասին տեղեկութիւններ (գրած կամ ծաղկած ուրիշ ձեռագրերի՝ պատմողական ոճի ներկայացումներ եւ այլն):

Պատկերը լրացնենք մեր մի դիտարկումով. Քիւրտեանը հերթով իր ձեռագրերը դրել է գրամեքենայի մօտ, ապա թերթելով՝ ըստ ձեռագրերի թերթերի կարգի արձանագրել է այն ամէնը, ինչ նկատելի է՝ բնագիր, գրչութեան եւ յետագայ յիշատակագրութիւններ (խառն), լուսանցազարդեր, մանրանկարներ, թերթերի վիճակ (մանր կամ մեծ պատռուածքներ), ինչ որ տեղերից իրեն յայտնի գիտելիքներ եւ այլն: Պարզ է, որ այսպիսի նկարագրութիւնների մէջ ընթերցողն աւելի շուտ կարող է մոլորուել, քան՝ դիւրութեամբ գտնել իրեն անհրաժեշտ տեղեկութիւնը:

Այս ամէնի հիման վրայ հարկ էր, ուստի եւ արել ենք յաջորդ՝ աւելի աշխատատար գործը. Քիւրտեանի լիովին անսովոր, ձեռագրացուցակների ընդհանուր սկզբունքի հետ կապ չունեցող հարցակարգից նկարագրութիւնները վերածել ենք Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակում ներկայումս կիրառուող սկզբունքի եւ հարցակարգի:

Բերենք նախ Քիւրտեանի հարցակարգը, որ մանր տարբերութիւններով, ետեւառաջութիւններով, երբեմն նաեւ մոռացումներով, ունի հետեւեալ պատկերը. «Թիւ, Անուն, Ժամանակ, Թուրք (թերթ), Մեծութիւն (ծաւալ), Գրութիւն (գրչութիւն), Գիր (վերջին երկուսը յաճախ միասին դրել է Գրչութիւն անունն անբոյժ), Նիւթ, Տող, Կազմ, Հանգամանք, Պահպանակ, Մանրանկարչութիւն, Պարունակութիւն (= Բովանդակութիւն), Յիշատակարան (ըստ ձեռագրերի թերթերի կարգի), Գրիչ, Ծաղկող, Կազմող, Մեկնմաս եւ Ստացող, Տեղի, Թուական (ժամանակ), Ծանօթութիւն»:

Այս անկանոն վիճակից նկարագրութիւնները վերադասաւորել ենք ըստ Մաշտոցեան Մատենադարանի ստորեւ պատկերուող կարգի (ներկայացնում ենք անհրաժեշտ ձեւաւորումով՝ պարբերութիւն, տողի մէջ դիրքը եւ այլն)՝ միաժամանակ որոշակի սկզբունքով նշելով առաջացող հարցականները.

1. Թիւ
2. Անուն
3. Տեղի
4. Ժամանակ
5. Գրիչ:

6. ԾԱՂԿՈՂ: 7. ԿԱԶՄՈՂ: 8. ՄԵԿԵՆԱՍ: 9. ՍՏԱՑՈՂ:

10. ԹԵՐԹՔ. (հիմ էջակալում). պարապ: 11. ՊՐԱԿՔ: 12. ՆԻԻԹ: 13. ՄԵԾՈՒԹԻՒՆ: 14. ԳՐՈՒԹԻՒՆ (գրադաշտ): 15. ԳԻՐ: 16. ՏՈՂ: 17. ԿԱԶՄ: 18. ՊԱՀՊԱՆԱԿ (չգրուած):

19. ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹԻՒՆ [նկարք. անուն] էջ: 19ա. Խորան: 19բ. Կիսախորան: 19գ. Ճակատագարդ: 19դ. Լուսանցագարդ: 19ե. Զարդագիր: 19զ. Խորագիրք: 19է. Գոյներ:

20. ՊԱՏԱՌԻԿ-ՊԱՀՊԱՆԱԿ (անուն, ժամանակ, թերթ, նիւթ, մեծութիւն, գրութիւն, գիր, տող, զարդք, կարդալու յաջորդականութիւն, բնագրական սահմանք):

21. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 22 (միայն էջահամարներ եւ թուականներ). ՅԵՏԱԳԱՅ (միայն էջահամարներ եւ թուականներ): 23. ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ:

24. ՀԱՆԳԱՄԱՆՔ:

25. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

26. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳԱՂԱՓԱՐ ՕՐԻՆԱԿԻ

27. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԳՐԶՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ

28. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՅԵՏԱԳԱՅԻ

29. ԿՆՔԱԴՐՈՇՄ (վերծանութիւն):

30. ԳՐԶԱՓՈՐԶ:

31. ՆՇՈՒՄ:

Ինչ վերաբերում է Հ. Ս. Ճեմճեմեանի՝ «ուսումնասիրութիւն մը իւրաքանչիւր գրչագրի մասին» բնորոշած մասերին, ապա բոլոր նկարագրութիւնների այսպիսի՝ յաճախ շատ ընդարձակ շարադրանքները կանոնաւորել ենք, ստուգել եւ առայժմ պահել նկարագրութիւնների վերջում, ապա աշխատանքի աւարտին հանելու ենք եւ ըստ անունների այբբենական կարգի վերաբաշխելով, ցուցակի վերջում տեղադրելու ենք որպէս «ԳՐԻՉՆԵՐ», «ԾԱՂԿՈՂՆԵՐ», «ԳՐԶՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐ» ցանկ-բառարաններ: Մեր կարողութեան եւ հնարաւորութեան չափով այս ցանկերը լրացրել եւ լրացնելու ենք Քիւրտեանին հասու չեղած եւ նրա ցուցակի կազմումից յետոյ հրատարակուած նորագոյն գրականութեան մէջ առկայ տուեալներով: Պատրաստող անձերից առաւել կարեւոր համարելով գործը, թէ՛ այս մասերում եւ թէ՛ ամբողջութեան մէջ մեր յաւելումները եւ ճշգրտումները Քիւրտեանի արածից չենք զատել³⁷. այսինքն՝ ձեռագրացուցակի պատասխանատուն

37 Կարիքի դէպքում Քիւրտեանի եւ մեր արածները հնարաւոր է պարզել եւ իրարից զատել հրատարակուելիք հատորը համեմատելով նրա կազմածի

մենք ենք. աշխատել ենք մեր խղճի մտօք եւ մեր կարողութեան չափով՝ «որքան կարեւոր՝ զայն առնեմք», իսկ սրա գնահատականը պէտք է տայ ընթերցողը:

Նախապատրաստական այս ամբողջ աշխատանքը Երեւանում տեւել է ընդհանուր հաշուով եօթ ամսից աւելի, չարունակութիւնն արդէն եղել է Վենետիկում՝ այս Սուրբ Ղազար կրդգում, ուր երեք այցով (2001 Սեպտեմբեր, 2002 Հոկտեմբեր-Նոյեմբեր եւ 2004 Սեպտեմբեր-Նոյեմբերի կէս) զօր ու գիշեր աշխատել ենք ուղիղ հինգուկէս ամիս:

Վենետիկում արել ենք հետեւեալը. վերը տեսանք, որ Քիւրտեանի ցուցակն ունի «նկարագրութիւնը 259 ձեռագիրներու»³⁸. Խրականում Հ^մ 251-259 ձեռագրերը նկարագրուած էին բաւական հապճեպ եւ խիստ համառօտ, ապա՝ չափսերի համեմատ դարակներում աւելի յարմար տեղաւորելու համար սրանցից մի քանիսի սկզբնական համարները Ս. Ղազարում փոխուել են, ուստի թէ՛ այս ինը ձեռագիրն ի նորոյ ենք նկարագրել եւ թէ՛, բնականաբար, վերջին յիսունմէկ՝ Հ^մ 260-300 ձեռագրերի նկարագրութիւնները մենք ենք արել՝ մեր սկզբունքով: Բուն ձեռագրերի հետ համեմատելով՝ նկարագրութիւնների համարեա կէսը հիմնովին վերանայել ենք. աւելի ճիշտ՝ շատ դէպքերում նորից ենք նկարագրել, ուստի եւ մեր արածները նախորդներին բոլորովին նման չեն: Ստացուելիք հսկայ հատորի ամբողջ աշխատանքը մօտ կիսով չափ արել ենք. ապա ոչ թէ թողել ենք, այլ՝ ձեռագրացուցակն այդպէս էլ մնացել է թերի կամ անաւարտ:

Մէկ տարուց աւելի զօր ու գիշեր արուած այդ աշխատանքի գործնական արդիւնքը եղաւ այն, որ գիտական պարբերականներում տպագրեցինք Քիւրտեան հաւաքածուի 21 ժապաւինաձեւ հմայիլների մանրամասն ցուցակը³⁹ եւ միաժամանակ մշակեցինք այդ տեսակ ձեռագրերի նկարագրութեան եղանակը, որով Երեւանում մեր ունեցած 557 հմայիլներից արդէն նկարագրուել է 530 միաւորը: Հրատարակեցինք նաեւ նոյն հաւաքածուի

մեքենագիր բնօրինակի (հաւաքածուի հետ միասին պահպանուում է վեներտիկի Միքիթարեան մայրավանդում) հետ:

38 «Բազմավէպ», 1988/Ա.-Դ., 306:

39 Տե՛ս ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Գ., Յուցակ Յարութիւն Քիւրտեան հաւաքածոյի հայերէն ժապաւինաձեւ ձեռագիր հմայիլների - «Էջմիածին», 2013/Գ., 62-98, է., 141-144:

21 կոնդակներին նկարագրութիւնները եւ բնագրերը⁴⁰, այստեղ եւս անելով նիւթի ներկայացման որոշակի եղանակի մշակում: Վերջապէս նկարագրել ենք նաեւ Քիւրտեանի դիւանը կամ այն, ինչ մեզ տրուել է որպէս Քիւրտեանի՝ Ս. Ղազարում առկայ դիւան, ապա հրատարակել ենք այդ դիւանի գիտական արժէք ունեցող մի միւսը՝ Հ. Ն. Ակինեանից Քիւրտեանի ստացած 7 նամակ եւ Հ. Հ. Ոսկեանից ստացած 2 բացիկ⁴¹:

Յոսանք մի օր ամբողջացնենք այս ծաւայուն աշխատանքը, այսպիսի խորագրով՝ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Միփարեանց ի վեցետիկ. «Յարութիւն Քիւրտեան հաւաքածոյ», նկարագրեցին՝ Յարութիւն Քիւրտեան, Գեորգ Տէր-Վարդանեան, Խմբագրեց եւ կազմեց՝ Գեորգ Տէր-Վարդանեան»: Եւ այս հատորն անպայման պէտք է ունենայ նոյն տասնութ անուն ցուցիչ ցանկերը, ինչ ունեն Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակի հատորները՝ «Գրչութեան Ժամանակագրական ցանկ» ... «Ձեռագրերի ընդհանուր աղիւսակ»:

ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

40 Տե՛ս ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Գ., «Յարութիւն Քիւրտեան» հաւաքածոյի կոնդակները (նկարագրութիւններ եւ բնագրեր) - «Էջմիածին», 2012, Հ^տ Ե., 70-117:

41 Տե՛ս ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, Գ., Հ. Ներսէս, Ակինեանի եւ Հ. Համազասպ Ռակեանի նամակները Յարութիւն Քիւրտեանին, «Հանդէս ամսօրեայ», 2005, Ա-ԺԲ., 457-480:

Summary

VENICE MKHITARIST MATENADARAN (MANUSCRIPT LIBRARY) “HARUTYUN KURDIAN COLLECTION”

GEVORG TER-VARDANYAN

The Mkhitarist Congregation manuscripts collection among them “Harutyun Kurdian collection” is a little part of our common medieval manuscript heritage and contains only 300 Armenian manuscripts, however, according to the fair definition of compiler, it is the largest personal collection of Armenian manuscripts, which was made by the “personal funds” and belonged to one person whose name was Harutyun Kurdian and was gathered within 60 years of his adult life from the age 18 (1918) until the end of 1976.

The article describes the process occurrence and gathering collection (sources), it is revealed that the collection mainly appeared from West and East Armenian valuable manuscripts which were saved during the years of Genocide of Armenians spread all over the world.

In the article is given general assessment for the collection, by name is listed the most valuable units.

As well is represented the detailed list, the process of composition and present state of this valuable collection which involves 300 unique units of manuscripts.